

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Ղուկովանով գաւառի դէպքը: Մոսկւայի և Նիժնեգորոյի զեմստւոնների հրատարակութիւնները: Անրեքը հունձերի առաջին առնելու ծրագրերը: Ա. Ս. Երմոլովի ծրագիրը: Բարւոքման (мелиорационный) վարկի ծրագիրը: Շտեմարանների խնդիրը: «С. Петербургскія Вѣдомости» լրագրի առաջարկութիւնը: Ա. Բ. Կոնստանտինովի կոմիտէի գործունէութիւնը: Կիւղական հողային բանկի հաշիւներից: Պետերբ. բժշկական իրական կուրսերը: Պր. Լիխաչևի հրատարականը: Անտ. Բուդիրովի «Համալսարան լեզուն» և Ա. Պրլյուինը: Ս. Պ. Բոտկինի նամակներից: Ռուսաց Ակադեմիական նոր բառարանը: Սեմնակու մահը: Կոմսուհի Սալիասի մահը: Ռուսաց գրականութիւնը Ֆրանսիայում: Գաշկովսկու դէպքը: Խոլերան Ռուսաստանում:

Ղուկովանով գաւառը հռչակեց թէ իւր վերին աստիճանի չքաւորութեամբ, և թէ մանաւանդ ալն պատմութեան շնորհիւ որ տեղի ունեցաւ այդ գաւառի սովեալ բնակիչների օժանդակողների կողմից:

Անկարելի է չը կանգ առնել այդ տխուր, բայց միննույն ժամանակ և խիստ բնորոշ հանգամանքներով լի դէպքի վրայ:

Վերը ընթերցողը նկատած կը լինի որ այդ Ղուկովանով գաւառը ամենաչքաւորներից, ամենաթշուառներից մէկն է եղել սովեալ բոլոր 17 նահանգների մէջ:

Այդ ինչպէս են կատարել ալն օժանդակութիւնները որ անել էր տալիս տէրութիւնը թէ իւր սեփական միջոցներից և թէ եկած մասնատր բարեգործութիւններից: Բայց ամենից առաջ չը մտածանք ասելու որ այդ օժանդակութիւնների չափերի որոշելը և տալը կատարում էր գաւառներում գաւառական օժանդակող (проходовольственная) լանձնաժողովների ձեռքով:

Պր. Առաւուրբիցկի'ն—ճահանգական ատեանի անդամը—սպից իւր զեկուցումը՝ չունար ամսին իւր վերստուգութեան լանձնած գաւառների (Արղամասի, Ղուկովանովի և Սերգայի) օժանդակող լանձնաժողովները գործունէութեան մասին: Մի զեկուցում, որի մէջ նա եզրակացնում էր թէ օժանդակող այդ երեք գաւառական լանձնաժողովների նախահաշիւները

բաւական աչափ կանոնաւոր չեն կազմւած: Միմիայն Լուկովեանով գաւառի լանձնաժողովը—բաղկացած բոլոր զեմսուծների նաչալնիկներից—պատասխանեց փետր. 19 ին որ Լուկովեանով գաւառում չը կալ չաւաքական (ՄВССОВБВР) կարօտութիւն, շնորհիւ հաստատւած բարօրութեան և տեղի ունեցած աշնանանացանի լաւ չունձերի և որ իրանք—ալդ նաչալնիկները—բացի մինխարութեան և նաճանդապտի հրահանգներով ղեկավարելու՝ ղեկավարում են նաև ծառալութեան և բարոյական պարտաորութիւններով, ¹⁾ աչքի առաջ ունենալով նաև ամեն մի գիւղացու սպագալ տնտեսական դրութիւնը:

Այս հերքումին պատասխանում է Լուկովեանովին, բայց այս անգամ թւերով: Նրա ալդ պատասխանը ձևակերպում է այսպէս. օժանդակութիւնները սկսել են ուշ (ղեկտեմբեր ամսին), ամսական 30 ֆունտ հաց ստացել են միայն 132 հոգի, իսկ 766 հոգի միմիայն 20 ֆ. ամսական, մինչև լունարի կէտը Լուկովեանով գաւառում բաժանւել է միմիայն 38.000 փութ հաց, մինչդեռ Արզամասի գաւառը ստացել է 63.000 փ., իսկ Սերգաչինը՝ 150.000 փութ:

Այս նոր պատասխանից լետով Լուկովեանով գաւառի օժանդակող լանձնաժողովը վճում է խնդրամատոյց լինել՝ միջոցներ ձեռք բերել լրագրական բանակուլը արգելելու համար, սորպէս զի իրանք—լանձնաժողովի անգամները—կարող լինեն հանգիստ կերպով վերաբերւել դէպի գործը և շարունակել պաշտօնական գործունէութիւնը: Բայց գեներալ Բարանովը ընդդիմանում է այս մէկ բանին և լանձնաժողովը լետ է կանգնում իւր վճուից:

Այնուհետև առաջ է գալիս մի ալ խնդիր. նաճանգական բարեգործական կոմիտէտը առաջարկում է Լուկովեանով գաւառի բարեգործական հոգաբարձութիւններին ճաշարաններ լանալ, իսկ այս վերջինը, գեներալ Բարանովի վկայութեամբ, կամ ընդունակ մարգիկ չի կարողանում գտնել աչս բանի համար, կամ արգելքներ է դնում լանձն առնել ցանկացողներին և կամ առհասարակ ընդդիմանում է բոլոր կարօտ գիւղացիներին՝ ճաշարաններից օգուտը թող տալու, ալ միմիայն հողազուրկ գիւղացիներին, որոնցից ամեն մի գիւղում 2—2 կամ 3—3 հոգի են:

Նաճանգական կոմիտէտը հաւատում է իւր ընտրած մարդուն և սրա ընտրածներին, իսկ գաւառական հոգաբարձութիւնը միմիայն նրան՝ ում ընտրելու լինի զեմսուօի նաչալնիկը: Բայց երբ վերջապէս նաճանգական կոմիտէտը պահանջում է որ ճաշարաններ հիմնեն—գաւառական հոգա-

¹⁾ «Долгождъ службы и нравственной обязанности».

բարձութեան նախագահ՝ պարոն Ֆիլոսոֆովը՝ ազնականների տեղական առաջնորդը՝ հրաժարական է տալիս...

Մասնաւորեն քաղաքում զանազան անձանց հաղորդած տեղեկութիւնները: Լուկուկանով գաւառում օժանդակութիւն չի տրուել ոչ հողատէր գիւղացիներին և ոչ ալն ծառայող գիւղացիներին, որոնց տարեկան վարձը հասնում էր թէկուզ 16 ռուբլու փութրար ամսին 990 հողատրած է եղել ամսական 11¹/₃ ֆունտ, իսկ 1125 հողու ամսական 6¹/₂ ֆ.: Պրիւկիա գիւղում օժանդակութիւն չի տրուել ալն գիւղացիներին, որոնք իրաւ է քաղցած են եղել, բայց էլի դեռ ոչ ինչ ունեցել¹⁾: Ուղուն-Մալգանի գիւղի 7 բնակիչներից խնդիրք էր ստացւել նահանգական օժանդակող լանձնաժողովում, մի խնդիրք—որի մէջ նկարագրելով իրանց կարօտ դրութիւնը՝ գանդատում էին փոխ արեղ օժանդակութիւնների սակաւութեան վրա: Նահանգական լանձնաժողովը լանձնեց զեմտուօր նաչալնիկին քննել ալդ գործը²⁾, և սրա ներկայութեանը—6 գիւղացիներ հրաժարեցին իրանց ստորագրութիւններից... Գեներալ Բարանովի ասելով իւր ուղեկիցների հետ գիւղացիների տներում նաչը տեսաւ և ոչ մի «տարական»³⁾ նրանք կորան ուտելու հացի բացակայութիւնից. իսկ խառնուրդներով եկած հացը (хлебъ съ хебедомъ) таракавъ не ѳетъ... Ի դէպ ալդպիսի հացը տորֆի⁴⁾ նման է և ունի անտանելի համ. ի լրումն այս ամենի լալտեւեց որ հակառակ պաշտօնապէս հաղորդած տեղեկութիւններին՝ ըստը աշնանացան դաշտերը չեն վարած և բացի ալդ «թղթի վրա» պահեստներում դտնող գարնանացանը՝ հարկաւոր քանակութիւնից աւելի էր ցոյց տրած, և գաւառական առաջնորդի կարգադրութեամբ սեւմացուն վերադարձած էր գիւղացիներին մինչև գարուն պահելու պարտաւորութեամբ:

Լուկուկանովի գաւառական լանձնաժողովի արկածների այս պատմութեանը վերջ տալու համար ասենք մի երկու խօսք ևս: Երբ որ Նյիժնեգորդի նահանգական օժանդակող կոմիտէտի լանձնարարութեամբ պ. Վ. Գ. Կորոլենկոն, երիտասարդ համակրելի ռուս գրողներից մէկը, այցելեց Լուկուկանով գաւառը—ճաշարանների թիւը 2—3 շաբաթում հասաւ 50-ի, մինչդեռ նրանից առաջ մի հատ ճաշարան հաստատելու համար հարկաւոր էր մի ամբողջ ամիս, ալն էլ եթէ գլուխ էր գալիս:

¹⁾ „Хотя тоже не ввши сидятъ, а всетаки еще въ силѣхъ“.

²⁾ Քարածուխի ամենաստոր տեսակը, որը գոյանում է ճահիճներում բուսականութեան փտելուց:

³⁾ Գաշտալին մեծ միջատ:

⁴⁾ „Произвести рзаслѣгованіе“.

*
**

Անցեալ տարւալ սովի պատճառների մասին լուս են տեսել զանազան վիճակագրական թւեր պարունակող հրատարակութիւններ թէ զեմստւոնների ձեռքով կատարած՝ (Մոսկւալի ¹⁾ նահանգի զեմստուօլիւնը և Նիժնենովգորոլիւնը ²⁾ և թէ մասնաւոր անձերի ձեռքով: Այդ ամեն գրութիւնների եղրակացութիւնը մի է: Նոքա վկայուած են, որ անցեալ տարւալ սովը «արդիւնք է գիւղական բարորութեան անկումի, որը իւր կողմից հետեանք է տեղ հնացած հիւանդութեան որ պայմանաւորուած է եղել անբերք հունձերի մի շարքով, ձեռնվաստակի պակասելովը, բանող ձեռքի գնի ընկնելովը, խոտատեղերի քչանալով, հիւանդութիւններով և հըրգեհներով: Պերճախօս թւերը գալիս են ապացուցանելու այդ ամենը:

Տարեցտարի վճարող տուրքերի գումարը պակասել է. Նիժնգորոլեան նահանգը վճարել է 1881 թ.— 3.835.118 ռուբ. արքունական տուրք,— իսկ 1890 թ.— 2.483.059 ռ., սակ է մօտ 850.000 ռ. պակաս: Արա համեմատ աւելացել է ապուրի մնացած տուրքերի քանակութիւնը, որը 1881 թ.— 4⁰/₀ էր, 1882 թ.— 9⁰/₀, 1889 թ՝ 14⁰/₀, 1890 թ.— 35⁰/₀:

1881 թ. անասունների թիւը, նոյն նահանգում, եղել է 1.010.624 գլուխ, 1890 թ.— միմիայն 855.802: Լուկուեանով գաւառի մի գիւղում 8 ոչխարից մէկն էր մնացել, 25 խոզից մէկը նոյն ժամանակամիջոցում: Նոյն գաւառում գարնանացան արտերի տարածութիւնը պակասել էր 15⁰/₀:

Գաղթելու խնդրագրեր էին մատուցւած 1890 թ. 69, իսկ 1891 թ. արդէն 2.263 հոգուց:

Արա հետ զուգընթաց է բոլոր գիւղական արդիւնագործութեան գների պակասելը:

Սամարալի նահանգի դրութիւնը աւելի վատ է ³⁾, 1867 թ. ամեն մի գիւղացու ընկնում էր 3,2 ձի, 1885 — 2,7, իսկ հիմա աւելի պակաս, քանի որ մինչև նոյեմբերը (91 թ.) ծախւած էր 142.000 ձի, 92.000 կով ու եղ և 817.000 ոչխար: Գիւղացու մի զեսեատինա ⁴⁾ հողը արդիւնք է տալիս 40 կոպէկ, մինչդեռ մասնաւոր հողատիրոջ մօտ այդ արդիւնքը հասնում է մի ռուբլու և էլ աւելի: Վերջին 5 տարւալ ընթացքում, համաձայն զեմստոնների վիճակագրութեան, արձանագրւած են 13.345 փոխառութեան դէպքեր 1.170.935 ռ. գումարի: Նկատելու է որ տոկոս էր վճարում երբեմն 240⁰/₀! Գրաւ

¹⁾ „Продовольственное дѣло“.

²⁾ Урожай 1891 г. въ Нижегородск. губ.

³⁾ „Юридическіѣ Вѣстникъ“ 1891 № 11 և 1892 № 3. Եղևածներ պ. Կրանոպերովի:

⁴⁾ = 2400 քառակուսի սաժէն:

է դրած եղել մինչև նորն իսկ 91 թւի սովեալ տարին 450.000 դե- սեատինա համալնական հող. Աշնանը գիւղացին վաճառում էր իւր հացը 35—40 կոպէկով փութը, իսկ դարնանը էլի լետ առնում 72 կ. և աւելով Մի քանի գիւղերի տնատէրերի $1/3$ — $1/2$ ձմեռը գնում են եղել մու- րացկանութեան! Տուլայի նահանգում ճանապարհորդած Ն. Կ. Միխալովս- կին Նկարագրում է Русскія Вѣдомости լրագրում (№ 104) նահանգի ող- բալի և խղճալի դրութիւնը. միայն մի իրողութիւն քաղենք նրա պատ- մածներինց. Շարապով գիւղի 299 ընտանիքներից մաքուր հաց ունեն մի- միայն 4 ընտանիք, մնացածները կամ խալաւ կարտ են հացի, կամ գործ են ածում զանազան խառնուրդներ (хебедя) և ալլն, որոնք առաջ են բերում տեսակ տեսակ անբուսեայի հիւանդութիւններ մարտդական գոր- ծարաններում...

*
**

Անցեալ տարւոյ Ռուսաստանի 17 նահանգների վատ հունձքը զեռ երկար խօսակցութեան նիւթ կը լինի ամենքի համար. Պարբերական մա- մուլը զեռ երկար ժամանակ զբաղւելու է այդ խնդրով մինչև որնա միան- գամալն պարզած համարւի: Այդ խնդիրը այնքան ծանրակշիւ է, մանա- ւանդ Ռուսաստանի համար, որը «հացի շտեմարան» կոչումը վաղելելով հան- դերձ՝ ինքը երբեմն շատ նեղ, անելանելի դրութեան մէջ է ընկնում—ան- հրաժեշտ է որ այդ խնդիրը լաւ մշակւած լինի քանի որ այդ հացի խըն- դիրը իսկապէս մահու և կեանքի խնդիր է: Ուստի ամեն մի աշխատու- թիւն, որ անոււմ է այս նպատակով, ուշադրութեան և ուսումնասիրու- թեան արժանի է նաև մեր կողմից, քանի որ մեր կովկասի տնտեսական դրութիւնը սերտ կապով է կապւած Ռուսաստանի լաշող կամ անլաջող տնտեսական դրութեան հետ:

Այս տեսակ փորձերից մէկն է նոր լոյս տեսած «Անբերրութիւն և ժո- դովրդական աղէտ» վերնագրով գիրքը: Ումանք այս գրքի հեղինակ են հա- մարում պ. Ա. Ս. Սրմոլովին—որը կառավարիչ է տուրքերի ղեպարտա- մնտի: Այլքի առաջ ունենալով խնդրի լրջութիւնը՝ մինք կը ծանօթաց- նենք ընթերցողին կարճառօտ կերպով պ. Սրմոլովի ընդարձակ ծրագրի հետ բաղկացած 16 գլխաւոր կէտերից, որի գործադրութիւնը պ. Սրմոլովը կարեոր և անլետաձգելի է համարում: Ահա այդ 16 կէտերը. 1) Ռուս հո- ղագործութեան օգերեութարանական պայմանների հետազօտելու գործը զենել հաստատ հիւճքերի վրա: 2) կազմել ծրագիր օգերեութարանական կալարանների պաշտօնի մասին: 3) Ժողովել նիւթեր պատահած անբերք հունձերի՝ անցեալ տարւանի հետ համեմատութիւնների անելու համար: 4) Հետազօտել վալլա, Գոն, Օկա, Գնեպր դետերի ակնները: 5) կարգի բե- րել անտառաբուծութեան վերաբերեալ եղած հետազօտութիւնները և շա-

րունակել նրանց աւելի լաւ ձևով: 6) Յայտնի կացուցանել Ռուսաստանի ալն տեղերը, որոնք անբերրիանում են հողմաբեր աւազով: 7) Տափարակային կազմող վիհերի (ՅՅԱՅԱ) առաջքն առնել: 8) Հետազոտել՝ արդեօք գետաջրի մակերևութի ցած անալը հետևանք է, թէ՞ պատճառ երաշտի— սրա առաջքն առնելու նպատակով: Ուսումնասիրել հողի մշակութեան ալն պլանները, որոնց միջոցով պահպանում լինէր հողի խոնաւութիւնը: 9) Ժողովել եղած տեղեկութիւնները ջրադրիւրների և արտեզեան հորերի վերաբերեալ: Այս ուղղութեամբ գործերի նոր ծրագիր կազմել: Ուսումնասիրել ջրամբարների գործը տափարակ տեղերի համար: 10) Ուսումնասիրել ջրանցքներ (обводнительных работ) ստեղծելու գործը և եղածների մասին տեղեկութիւնները ի մի ժողովել: 11) Որոշել տեղագրական սահմանները զանազան մշակող բույսերի ընդարձակման: 12) Տեղեկութիւններ հաւաքել ալն տեսակ բույսերի մասին, որանք աւելի լաւ են տանում թէ ցուրտը և թէ չորութիւնը: 13) Ուսումնասիրել ալն հարցը՝ թէ բացի հողագործութիւնից ուրիշ ինչ գիւղատնտեսական ճիւղեր կարելի է տարածել անբերրի հունձին հակակշիռ կազմելու համար: Լական նշանակութիւն ունի, շարունակում է պատեղ պ. Սրմուղը, բանջարանոցապահութեան տարածումը գիւղացիների մէջ: 14) Ուսումնասիրել գիւղատնտեսական կալարանների հարցը, գուցէ և հետեւ՝ ամբրիկական այս տեսակ կալարաններին: 15) Կազմել մի լաւ նախագիծ անտառաբուծութեան և ոռոգման՝ պետական մշակութիւնների— սկսելով այս գործը աւելի կարօտ տեղերից: Պարզել՝ արդեօք աւելի նախապատելի չէ նախադժոզ բարւոքման վարկը գործադրել ամենից առաջ օգնութիւն տալու մասնաւոր անձերի ձեռնարկութեան՝ պետական նոյն տեսակ ձեռնարկութիւնների հետ միաժամանակ: 16) Ուսումնասիրել հարաւային Ռուսաստանի կլիմայական պայմանների բարւոքման խնդիրը կամ կասպից ծովի մակերևութը բարձրացնելով, կամ կասպեան տափարակների ոռոգումով, կամ անտառ գցելով և այլն: Ընթերցողը անշուշտ նկատած կը լինի որ այս ծրագիրը իսկապէս 16 կէտերից չէ բաղկացած, այլ շատ աւելի, քանի որ շատ կէտեր երկու երեք առաջարկութիւններ է պարունակում: Այնուամենայնիւ, չը նպած իւր ընդարձակութեան՝ այս ծրագիրը աչքի է ընկնում իւր միակողմանիութեամբ— գլխաւորապէս ուշադրութիւն դարձրած լինելով օդերևութաբանական և կլիմայական կողմերի վրայ:

Ռուս մամուլի ասելով լաւ հետեանքի հասնելու համար անհրաժեշտ է մաքրել և զտել մեր հայրենակիցներին իրանց աւերիչ բնաւորութիւնից, որը նրանց մէջ արիւն և մարմին է դառելու: Մենք ևս առաջ բերենք ալդ բիւրաւոր օրինակներից մի քանիսը, որոնք բերած են նաև Սրմուղի աշխատութեան մէջ:

1) Ատորախանի նահանգում 40 տարի սրանից առաջ Нарыкъ Песни

անունով մի անտառ կար 120.000 զեսեստինա ¹⁾ չափով. այժմ մնացել են միայն ողորմելի հետքերը, ուր և արածեցնում են անասուններին, Անտառի անհետանալովը շրջակա հողերին վտանգ է սպառնում քամով բերւող աւազներինց,

2) 15 տարի սրանից առաջ վորակա գետը մի հիանալի գետ էր առատ ջրով, ձկնով և թռչուններով, որոնցով լիքն էր գետի երկարութեամբ ձգւող անտառը: Ներկայումս դետի հետքերը տեղ տեղ կորել են, ինքը գետը տեղ տեղ բոլոր վին բարակել է, անտառներից չի մնացել և ոչ մի հաս ծառ՝ ամենը կարուած, ոչնչացրած է:

3) վորակա գետի պէս աննաւագնաց են դառել Ռուսաստանի շատ գետեր. Բխարկ, Յնա, Խոպեր, վորոնեծ, Մեղվեղիցա, նոյն իսկ Կոն, Չդնեպր, վոլգա գետերը բարակել են:

4) Տերի նաճանգում, որտեղից սկիզբ են առնում Ռուսաստանի գըլխաւոր գետերը՝ Կնեպր, վոլգա և Արեմտեան Գլինճան — անտառապահպանութեան վերաբերեալ օրէնքը մտցրել է միմիայն 1890 թ. երբ անտառների կէսը արդէն կտրւած ոչնչացրած էր:

Ռուսական մամուլը անշնտաձգելի է գտնում և պահանջում

1) Ռամիկի համար կատարեալ տղատութիւն տեղից տեղ տեղափոխելու

2) Անցագրերի միանգամայն վերացնելը: Այս երկու կէտերի անհրաժեշտութիւնը և օգտակարութիւնը արդէն ապացւած և անվիճելի է համարում.

մնում է միայն սրանց իրագործելը: 3) Գիւղական ոչ խոշոր վարկի կազմակերպութիւնը և 4) գործադրել ծրագրւած և պետական կալւածների միջնորդութեան հսկողութեամբ մէլանձնաժողովի կողմից արդէն խմբագրւած բււրօքման (мелиорационный) վարկի նախագիծը:

Այդ տեսակ վարկի նպատակն է նպաստել գիւղատնտեսութեան բարւոքմանը՝ փոխառութիւնների միջոցով. ֆոխառութիւն պիտի տրւի ա).

հողի բարելաւութեան և տնկարկութեան, այսինքն հողեր չորացնելու և ոռոգելու ²⁾ համար, անտառարուծութեան, այգեգործութեան և խաղողարուծութեան համար բ)

գիւղատնտեսութեան և երկրագործութեան համար անհրաժեշտ անասունները և գործիքները ձեռք բերելու համար.

ֆոխառութիւնները պիտի լինեն համաձայն ու թեամբ պետական կալւածներին, ֆինանսներին և ներքին գործերին մին ի ստրութիւններին. ֆոխառութիւններ կարող են ստանալ թէ՛

մասնաւոր անձինք, և թէ՛ գիւղական համայնքներ, զեմտւօներ և այլն:

Փոխառութիւնները տրւում են 7—10—15—20—35 տարի ժամանակամիջոցներով՝ նալած թէ՛ ինչ բանի համար են: ֆոխառութիւնների տոկոսը

պիտի լինի 4%¹⁾, իսկ պարտքաւջը՝ համեմատ փոխառութեան ժամանա-

¹⁾ Գեսեստինան = 2400 կառակուսի սաճննի:

²⁾ Обводнительные и орасительные работы.

կամրջոցին: Փոխառութիւնների գործադրման հսկողութեան համար նշանակուած են նահանգական գիւղատնտեսներ (губервскіи агрономъ) և սրանց օգնականները:

*
* *

Կառավարչական շրջաններում մտադրութիւն կալ բարեփոխել շտեմարանական գործը, ուստի ներքին գործերի մինիստրութիւնը շրջաբերականների միջոցով առաջարկել է նահանգապետներին որ սրանք— ոչ ուշ քան լուվրի 15-ը իրան մանրամասն տեղեկութիւններ տան՝ շտեմարաններ ունեցող կամ շտեմարանական տուրք վճարող համալքքների թւի մասին, շտեմարանների ընդարձակութեան մասին, շտեմարանների պատրաստ պաշարի մասին, նաև շտեմարանական գումարների մասին:

Թէ ալս և թէ առհասարակ սովի հետ սերտ կապ ունի Ս. Պետերբուրգի գիւղի է Վ. Ե. Դոմոստի լրագրի մը առաջարկութիւնը. «Շատ օգտակար կը լինէր Պետերբուրգում համաժողով կազմել կառավարչական և դեմստեօսների ներկայացուցիչներին թէ սովից փնասուած և թէ սոցա կից նահանգների: Այս համաժողովը կըտար իւր վերջնական վճիռը թէ սովի պատճառների մասին և թէ ապագայում եօլն տեսակ աղէտի առաջն առնելու ձեռնարկելի միջոցների մասին»:

*
* *

Կարօտեալներին բարեգործական միջոցներից օգնելու՝ հաստատուած առանձին կոմիտէտը Մեծ Իշխան թագաժառանգի նախագահութեամբ ստացել էր 3 միլ. ռուբլի մասնաւոր նւէրներ, իսկ իւր ամբողջ հասուլթը հասաւ 10 միլ. ռ. աւելի, որից 8 միլիոն ռ. մխւած է իբր օժանդակութիւն և 1 միլիոն ռ. գործադրած է ձիեր առնելու:

*
* *

1883 թ. ապրիլի վերջերքին գործել սկսած Հողալին Բանկի տպւած հաշիւներից մի քանի տեղեկութիւններ քաղնք մասնաւորապէս նրա 1890 թ. գործունէութեան մասին:

Բացի 1% տարեկան տուրքից բանկը վերցնում է 34 $\frac{1}{2}$ տարւալ փոխառութեան համար պարտքաչէլի հետ մխալին 7 $\frac{1}{2}$ % իսկ 24 $\frac{1}{2}$ տարւալ համար 8 $\frac{1}{2}$ %: Կարելի էր կարծել որ ալս պովմանները շատ ձեռնտու են գիւղացիների համար և բանկի գործունէութեան ծաւալը տարէց տարի պիտի լաւանաւր—բալց իրողութիւնը ալ բան է հաստատու, Մինչդեռ բանկը 1890 թ. փոխ էր տւել 4.519.209 ռ. և գիւղացի-

ներից մնացորդ վճարներ ստացել 1.666.782 ռ., նախորդ տարիներում փոխ տւած գումարները ալպէս են ներկայանում.

| | | |
|---------|---|------------------|
| 1884 թ. | — | 9.529.368 ռ.ուր. |
| 1865 » | — | 13.761.978 » |
| 1886 » | — | 11.148.850 » |
| 1887 » | — | 7.495.197 » |
| 1888 » | — | 5.133.539 » |
| 1889 » | — | 3.692.133 » |

Ուրեմն 1890 թ. փոխ տւածի գումարը միմիայն 1889 թ. գումարից է աւել մօտ 800.000 ռ., իսկ մնացեալ 5 տարիներից շատ աւելի պակաս.

1883 թ. մինչև 1890 թ. վերջը բանկը տւել է 7.367 փոխատուութիւններ 56.140.438 ռուբլու. Նոյն ժամանակամիջում բանկը ստացել է գիւղացիներից մնացորդ վճարներ 12.581.781 ռ., ուրեմն գումարը բոլոր եղած գնումների, որոնք կատարւել են ալք բանկի շնորհիւ, համեմալ է 68.722.220 ռուբլու 7 տարւալ ընթացքում. Հողեր աւնողները եղել են 225.485 ընտանիք, որոնց արական սեռը 728.231 հոգու էր հաւասար. Գնւած հողի տարածութիւնն է 1.579.391 դեսետտինա, Ալս վերջին թւից մասնաւոր գիւղացիներ ձեռք են բերել 16.349 դեսետտինա՝ վճարելով 362.073 ռ. բանկի 431.055 ռ. փոխատուութեան հետ. Գիւղական համայնքներ ձեռք են բերել 731.559 դեսետտինա 4.182.441 ռ., վճարելով բանկի 27.979.033 փոխատուութեան հետ. Ընկերութիւններ ձեռք են բերել 831.483 դեսետտինա վճարելով 8.037.266 ռ., բանկի 27.730.750 ռ. փոխատուութեան հետ. Ասել է թէ մասնաւոր գիւղացիները գնելիս վճարել են 45% առքի գնից, ընկերութիւնները մօտ 22% իսկ համայնքները մօտ 13%:

Տարեցտարի տւած փոխատուութիւնների գումարները համեմատելիս ոչ թէ աւելանալ է նկատուում, ալ խոշոր պակասում. ասել է թէ կամ գործը թերութիւններ ունի կամ վերցնող տոկոսը շատ է բարձր և հողը չի կարողանում ալքքան արդիւնաբերել. Աւ իրաւ թւերի մի ուրիշ շարք ապացուցանում է ալք ենթադրութիւնը.

1887 թւից մինչև 1890 թ. բանկի վրալ մնացել են 113.175 դեսետտինա, որոնց համար փոխ էր տւած 6.745.563 ռ. պատկառելի գումարը, իսկ գնողներից ստացւել էր 748.501 ռ., նմանապէս ոչ պակաս պատկառելի գումար. Գնողները ետ էին կանգնել իրանց գնած հողերից և ձեռք վերցրել իրանց տւած մօտ 750.000 ռ. գումարից. Իրաւ է գնողների մնացորդ վճարները կազմում են ընդհանրապէս առւած գնման 10% միայն— բաց դա միայն ընդհանրապէս վերցնելիս է ալքպէս. իսկ մասնաւոր դէպքերին գալով՝ նկատուում է որ գնողները ետ են կանգնել իրանց գնած հողերից՝ վճարած լինելով 27%, 33% և նոյն իով 40%. գնման արժէքից. Մինչև 1890 թ. բանկի ձեռքին մնացած հողերը իրան վնաս են պատ-

ճառել 1.259.649 ու, որին եթէ աւելացնենք նոյնպիսի վնասը 699.323 ու, կը ստանանք մի կողմ թիւ մօտ 2 միլ. ուրբլի Այդ գումարից հանելով զանազան հասոյթներ՝ էլի վնասը հասնում է 1.200.000 ուրբլու:

Եթէ այդպէս շարունակելու լինի, բանկին կարող է անխուսափելի վտանգ սպառնալ: Պր. Գերցենշտէյնը ¹⁾ առաջարկում է հողերը աւելի էփան վաճառել, պակասացնել վերցնող շահը, երկարացնել փոխառութեան ժամանակամիջոցը և բանկի $5\frac{1}{2}\%$ վկայաթղթերը դարձնել 5% , կամ աւելի ևս պակաս և վերջապէս կոնվերսիա անել եղած փոխառութիւնների համար:

*
* *

Բարձրագոյն բժշկական կուրսերի (Պետերբուրգում) ուսումնական 1890—91 թւի հաշիւներից առաջ բերենք մի քանի մանրամասնութիւններ: Ուսանողուհիների թիւը հասնում էր 278, Վալին եկածներ թիֆլիսից, Տաշկենտից և այլ հեռու տեղերից: Առաջին կուրսի 127 ուսանողուհիներից 41-ը՝ ունին զիմնադրւում ստացած շքադրամներ, Գլխաւոր եկամտաբեր կազմում է ուսանողուհիների վճարը որ կազմում էր 17.000 ուրբլի: Պետերբուրգի դուման նպաստ է տալիս 3000 ու, նոյնքան տալիս էր և լուսաւորութեան միջնատրոթիւնը: Անցեալ տարի զանազան երեկոթներից գոյացել էր մօտ $4\frac{1}{2}$ հազար ուրբլի, Բաց ելքը մօտ 37.000 ու է: Այդ կուրսերը պահպանւում են մի ընկերութեան օգնութեամբ («Բարձրագոյն իզական կուրսերին հասոյթներ նպաստող Պետերբուրգի ընկ.»): Ընկերութիւնը ունի նւէրներից գոյացած դրամագլուխ մօտ 11 հազար ուրբլի, իսկ պարտք մօտ 131 հազար: Ընկերութիւնը ունի մի գիշերօթիկ բաժին, ուր անցեալ տարի ապրում էին 54 ուսանողուհիներ: Ընկերութեան նախագահուհին է տիկին Լեխաչեւա, որի ամուսինը հրաժարւեց Պետերբուրգի քաղաքագլխի պաշտօնից նկատելով որ «կան ձախաւորներ որոնք աշխատում են արատաւորել քաղաքային վարչութեան գործունէութիւնը»:

*
* *

«Вѣстникъ Европы» ամսագրի № 5՝ տպած է վերջը մի լողւածի—որի հեղինակը՝ պ. Պըլպինը. խօսում է մի խնդրի մասին՝ Ա. Բուգիլովիչի նոր լուս ընծալած գրքի ²⁾ առիթով:

¹⁾ Русская Мысль. 1892 г. № 2.

²⁾ Антонъ Будиловичъ — Общеславянскій языкъ въ ряду другихъ общихъ языковъ древней и новой Европы. Варшава, 1892. (Անտոն Բուգիլովիչի համապատեան լեզու—հին և նոր Սլաւոնական միւս ընդհանուր լեզուների շարքում: Վարշաւա, 1892. երկու հատոր):

Անտ. Բուզիլովիչը ինքը իւր գրքում հարց դնելով թէ արդեօք հնարաւոր և անհրաժեշտ է գրական միութիւնը սլաւոնական ազգութիւնների համար» — ինքը վճռում է գրականապէս և ուռւ լեզուն առաջարկում իբր ընդունելի համասլաւական լեզու Պ. Պըլպինը, որը, ի դէպ ասած, հմուտ մասնագէտ է սլաւոնական լեզուների, գրականութեան և պատմութեան — քննադատելով պ. Բուզիլովիչի առաջարկութիւնները և համաձայնելով իսկ համասլաւական գրականութեան միութեան կարելիութեան և անհրաժեշտութեան հետ՝ ժխտում է սոցյա ապացուցանելու հնարաւորութիւնը և վկայում գժաւորութիւնների մասին ուռւ լեզուն համասլաւական լեզու ընդունել տալու գործում։ Պ. Պըլպինը ծաղրում է նաև Ա. Բուզիլովիչի ծաղրակը նկատողութիւնները իբր թէ ունեւր պէտք է մաքրն ուռւ լեզուն զանազան օտարաբանութիւններից և արդէն քաղաքացիութիւն վակելող քերթ և ճԵԾԻՕՏԵԿԱ նման բառերի տեղ գործածէին թրթ, ԵԵԾԻՕԵՆԵԱ և այլն. պ. Բուզիլովիչի ասելով քերթ և ճԵԾԻՕՏԵԿԱ՝ ի նման ուռւ բառերը «ծաղրալի են դառնում միւս սլաւականների համար և գժաւր կացուցանում ուռւ լեզուն համասլաւոնական դարձնելու հարցը»։

Պ. Պըլպինը իրաւացի կերպով մաքառում է այդ արհեստական միջոցի դէմ՝ նրա ասելով «Սլաւ աշխարհների վրա մեր (ուռւ) ազդեցութեան խնդիրը ամենից առաջ դառնում է խնդիր մեր սեփական լուսաւորութեան, որին վիճակած լինէր մրցել եւրոպական լուսաւորութեան հետ»։ Մի ուրիշ տեղ նա անելի պարզ է բացատրում իւր միտքը ասելով. «խնդրի ամենածանր կէտը գտնւում է ուռւ գրականութեան առաջադիմութեան մէջ — գրականութիւն բառի ամենալայն ըմբռնողութեամբ — այն է զեղարեւտական բանաստեղծութեան, գիտութեան բոլոր ճիւղերի, հասարակական կիանքի և վերջապէս ժողովրդական բարք ու վարքի զարգացման մէջ»։ Ահա ինչ է դիմադրում պ. Պըլպինը արհեստական միջոցներով համացեղ լեզուներից ուռւ լեզուն համասլաւոնական դարձնելու համար։

*
* *

«Вѣстникъ Европы» ամսագիրը շարունակում է տպել հանգուցեալ սլաւատական բժշկ պրոֆեսոր Ս. Պ. Բոտկինի՝ Բուզիլովիչից գրած նամակները վերջին ուռւ-թրքական պատերազմի դաշտից։ Բոտկինի վէճեալ նամակները՝ պարունակում են շատ մանրամասնութիւններ և կարդացւում մեծ հետաքրքրութեամբ նույն իսկ 15 տարուց չեստը Գտնելով շարունակ պատերազմի դաշտում զինւորական բժշկի կոչումով, նա առիթ ունէր շրվակու ամենքի հետ և նկատելու շատ բաներ։

Նա խօսում է «ասպերախտ» բուզիլովիչի մասին, լաւնալանջ և երկալնաբազուկ թուրքերի մասին, ուռւ գեներալների «եսո»-ի մասին, Պլենալի մասին, բարեսիրտ ուռւ զինւորների մասին, որոնց նա երբևմն

ասուղատիկներ» է կոչում, և երբեմն՝ ուսուցիչներն են միասին առած՝ սուրբ մարդիկ»։ Բայց ամենամեծ գովեստով նա խօսում է Ալէքսանդր Մկալարի և այն ժամանակաւ զինւորական մինիստր Միլլոտինի մասին. «Իրանց պահելու ձևով, գործին վերաբերելու լրջութեամբ և շիտակութեամբ, ասում է Բոտկինը իւր օգոստոս 4 նամակում, ամենահամակրելի կան անձեր մեռում են ինձ համար՝ Կալարը և Միլլոտինը։ Միայն սրանց հարելիս չի երևում այն «ես»-ը, որը մնացեալ գործիչների մեծամասնութեան մօտ աչքի է ընկնում։ Միլլոտինի համեստութիւնը և լրջութիւնը ներշնչում են դէպի նա ամենամեծ լարգանք, նա ամբողջովին նւիրած է իւր գործին, որին պատրաստ է զոհել նոյն իսկ իւր «ես»-ը»։

*
* *

Գիտութիւնների ուսուցիչական լուս է ընծայել «Ռուս լեզւի բառարանի» առաջին մասը (А—ВѢС բառերը)։ Չը նպած որ այդ նոր տիպի տիպիական բառարանի լուսաշարանում բերած է զանազան անձերի մի երկար ցուցակ (ի թիւս այլոց՝ Բալլասայն, Շարաուխ, Շոենկ, Գազենկամպֆ, Ջալցման, Գոլդենբերգ, Լոնդել և այլն), որոնց ուղարկած են եղել այս առաջին մասի սրբագրական թերթերը—այնուամենայնիւ բառարանի այդ մասը կազմած է ոչ բաւականին լրջութեամբ և հոգատարութեամբ, ինչպիսին պահանջում է այդ տեսակ մի բառարան, որից մի նորը հազիւ տասնեակ տարիներում տպագրուած լինի։ Ակադեմիական բառարանի այդ առաջին մասը պարունակում է բազմաթիւ անճշտութիւններ, պակաս բառեր, խրթին գաւառաբանութիւններ և նոյն իսկ սխալ բացատրութիւններ։

Աւելորդ չէ՛ եթէ լիչելու լինենք այստեղ, որ լաւ ուսաագէտներ ճանաչած են Ռուսաստանում ոչ թէ բնիկ ուսաները, այլ եկւորները։ Ռուսաց առաջին լաւ քերականութիւնները՝ Գրեչի, Օստենեկի (Ղոստոկով), Գալի աշխատասիրութիւններն են, մինչդեռ իւսուցիչ և Անտոնովի կազմածները բանի պէտք չէին։ Նմանապէս ուսուցիչ առաջին կարգի բառարանը, որը հիմալ էլ մեծ հեղինակութիւն ունի՝ Գալի աշխատութիւնն է։

Ներկայումս քաջ ուսաագէտ է համարուած պ. Գրոտը, որը և մեծ մասնակցութիւն ունի կազմող նոր ակադեմիական բառարանի մէջ։

*
* *

Անդեալները վախճանեց ուսուցիչական ամսագիրներէից մինի, այն է РУССКАЯ СТАРИНА՝ խմբագիր հրատարակիչ Մ. Ռ. Սեմեկին. Հանդուցեալը զո՞ր դնաց իւր եռանդուն և անհանգիստ ընաւորութեան. դեռ չը կազդուած մի թեթև տկարութիւնից, որ նա ստացել էր լարգելի

գրաքննիչ Վեդրովի թաղման ներկայ լինելիս—Սեմեակին աճապարում է կրոնչտադ Պետրոս Մեծի մասին մի դասախօսութիւն անելու ճանապարհին նա աւելի ևս վատանում է և հիւանդութիւնը սուր կերպարանք տանալով՝ վերջ է դնում նրա կեանքին։ Հանգուցեալը լատինի էր իւր եռանդուն, անխոնջ բնաւորութեամբ։ Գովելով հանդերձ Սեմեակուն իբր քաջ խմբագրի և հրատարակչի՝ ռուսաց մամուլը ակնարկում է որ այնուամենայնիւ հանգուցեալի օրով խմբագրող Русская Старина'ն պարունակում էր իւր մէջ ոչ արժանաւոր կերպով ռուսամասիրած պատմական աշխատասիրութիւններ, ալ շատ անգամ աննշան մարդկանց երկար ու բարակ, շատ անգամ անհամ լիշատակարաններ։

*
* *

Անցեալները վախճանեց Նշանաւոր ռուս կին հեղինակներից մէկը—կոմսուհի Նդիտաբէթ Վաս. Սալիաս զը Տուրնեմիր, որը աւելի լատինի էր Նւգենիա Տուր ծածկանուճով։

Կոմսուհին պատկանում է առաջին ռուս կին գրողների շարքին։ Իւր գրական գործունէութիւնը նա սկսեց 1840 թեւականների վերջերքում՝ տալով ռուս հասարակութեանը մի շարք ռումաններ մինը միւսի ետևից՝ Սահմանագծի վրա (На рубежѣ), Племянница, Կեանքի երևք ժամանակամիջոց (Три поры жизни), Կախարդած շրջան (заколдованный кругъ), Պառաւ կնիկը (Старушка)։ Կոմսուհին օժտած լինելով նուրբ ճաշակով և գեղարւեստական բնազդով՝ ձեռք էր բերել լուրջ գրական հմտութիւն։ Նրա գրական փորձերը (Этюды) և ռուսամասիրութիւնները ցրած են շատ ռուս ամազիրներում։ «Գեգեցիկը, բարին, ճշմարիտը»—ահա ռուս մամուլի ասելով—կոմսուհու անձնաւորութեան լատկանիչները։

Ռուս Նշանաւոր մարդիկ՝ Կուդրեաւցեւ, Գրանտովսկի'ն և այլն գնահատել էին կոմսուհու աղ արժանաւորութիւնները և նրա ամենամօտ բարեկամներն էին։

Կատովի՝ Русскій Вѣстникъ'ում աշխատակցելուց լետոյ կոմսուհին խմբագրում էր մի առժամանակ իւր հիմնած՝ «Ռուսական կեանքը» անունով ամսագիրը—որը, սակալն, երկար գոլութիւն շունեցաւ։ Այն ժամանակաւ ռուս կեանքի «մութ ամպերը» նրան քշել էին արտասահման, ուր 2—3 տարի մնալուց լետոյ նա վերադարձաւ Մոսկա և լուս ընծայեց պատանեկութեան համար գրած մի քանի վերին աստիճանի հնտաքրքրական, կրթիչ վէպիկներ, որոնցից ամենատարածածն է «Жатакомбы» (Գեանադամբանք) առաջին քրիստոնեանների կեանքից։

*
* *

Ընթերցողը արդէն գիտէ որ ռուս գրականութիւնը նւաճումներ է անում Եւրոպայում և մասնաւորապէս Պարիզում: Ռուս հեղինակները թարգմանում են ֆրանսերէնի և լատիշտակութեամբ կարդացում: Սկզբում՝ մի քանի տարի առաջ՝ այդ լատիշտակութիւնը ունէր քաղաքական աստա՝ ֆրանսիացիք, չը կամենալով առանձնացած մնալ քաղաքականապէս՝ աշխատում էին ձեռք բերել ռուս հասարակութեան և ապա ռուս կառավարութեան համակրութիւնները: Պարիզում տիրում էր մի ծայրակող մոդա դէպի աչն ամենը ինչ որ ռուսկան էր: Ռուսկան հագուստ, ռուսկան ճաշ, ռուսկան երաժշտութիւն, ռուսկան գրականութիւն և այլն: Տուրգենև, Տոլստոյ, Դոստոևսկի թարգմանում էին մինը միւսի ետևից: Այժմ Պարիզի Hachette et Co գրավաճառները լոյս են ընծայել Պուշկինի «կապիտանի աղջիկը» (33 գրաւիւրներով) և Գոգոլի «Տարաս Բուլբան» (27 գրաւիւրներով) մի մի հատոր in 8°. հատորի գինը 1 ֆ. 50, սանտիմ: Թարգմանիչների անունները չեն վիշւած:

Նոյն գրավաճառանոցը բացի Տուրգենևից հրատարակած ունի նաև Սալովի վէպիկները:

*
* *

Երբ որ հասարակ ժողովուրդը բժշկներին թողած՝ դիմում է հեքիմներին, մենք այդ իրողութիւնը բացատրում ենք ամբողջ տգիտութեամբ և չբաւարութեամբ: Երբ նոյն այդ տեսակ անուս, օգինբազ խաբեբաններին է դիմում հասկացող, ինտելիգենտ ասւած հասարակութեան մասը—մենք պատրաստ ենք այս իրողութեան մէջ տեսնել որ մարդիկ այլ ևս հաւատ չունին դէպի բժշկականութիւնը, դէպի գիտութիւնը և նրա պաշտօնականները: Հանգամանքների ալս դրութեան մէջ զարմանալի չէ, եթէ այդ փեշակի մարդիկ վերացրած չը լինին մեր միջից և ծծում տղէտների և թերահաւատների գրպանները: Յաւալին աչն է որ ալգպիսիները անպատիժ կերպով աչնքան ժամանակ ցեցի դեր են կատարում մինչև որ սալթաքում են բարձր մի սանդուխքից: Գաչկովսկի մէկը մեծ հռչակ էր վալելում և մեծ դումարներ ժողովում՝ մի ալցելութեան համար 25-ից 100 ու վերցնելով շնորհիւ իւր հնարած վիտալին (կենսատու) միջոցի, որը նա սրսկում էր հիւանդների կաշու տակը: Նա տարածում էր ալք (ալիթական) դեղի պատրաստելու մասին զանազան «առասպելներ» և աչնպիսի մի աղմուկ էր կարողացել հանել իւր ալք կենսատուի մասին, որ ինքը իւր գեղը դեռահատում էր ոչ աւել և ոչ պակաս քան մի միլիոն ռուբլի: Սակաչն ալք «կենսատուն» նրան շատ թանգ նստեց, երբ որ Պետերբուրգի Գրեսեր քաղաքապետի վրա արած վորձերը կենսատուութեանը հակառակ հետևանքներ ունեցան: Գաչկովսկին բանտարկւելուց լետուլ լատնում է իւր կենսարար

դեղի բազադրութեան մասերը. և իրաւի ալդ դեղի «դիւթական» մասերը են՝ վազելին, բորակ և ջուր—ամենն էլ անմշաս և գրոշանոց բաներ:

Ամենանց դէպքում Գաշկովսկու հունարը պէտք է ժամանակակիցը fin du siècle համարել. սրսկումներ Պաստեորի, Կոխի և ինչու Գուշկովսկուն էլ չը լինի:

*
* *

Հնդկաստանից Պարոկաստան և Պարսկաստանից Բաքու և ամ, բոլջ Կովկասը ընկած խոլերան մեծ կոտորածներ արեց այս ամառա-ամիսները և սարսափահար ժողովուրդը անմեռնչ կերպով տանում էր ալդ հաւաւոր աղէտը:

Կովկասից Ռուսաստան անցնելով, ուր ժողովուրդը դեռ նոր էր սկսել շունչ քաշել, ազատւելով սովի ճանկերից—խոլերան առաջ բերեց անկարգութիւնների մի ամբողջ շարք, անկարգութիւնների, որոնք լիապէս վկայում են ուրա ամբոխի խաւարամտութիւնը և կատարեալ տգիտութիւնը:

Ի թիւս շատ շատերի ամբոխի գազան կատաղութեանը Աստրախանում զո՞ զնաց «Ուխտ» մականունով հալ մէկը. «Ուխտը» փորձ էր փորձել ¹⁾ ետ կանգնել տալ մոլորած ամբոխին իւր գազանալին մտադրութիւններից: Ալդ «Ուխտը» ալրեց, խօսք չը կալ որ դատաստանը հարկ ու պատշաճ դատաւիճիւ կը կապանի մեղադրեալների դէմ:

Տ.

¹⁾ „Кавказъ“ № 186.